ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

« » ապրիլի 2010թ. N----Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մայիսի 19-ի թիվ 300 որոշմամբ և հաշվի առնելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Գույքահարկի գծով արտոնություն սահմանել սույն որոշման 2-րդ կետում նշված անձանց՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող բնակելի նշանակության շինությունների մասով, նվազեցնելով գույքահարկի գծով արտոնություն տրամադրելու օրվա դրությամբ՝ մինչև 2010 թվականի դեկտեմբերի 1-ը, առկա հարկային պարտավորությունները:

2. Սույն որոշումը՝ գույքահարկի գծով արտոնություն տրամադրելու նպատակով, տարածվում է՝

1) Հայրենական մեծ պատերազմի վետերանների,

2) Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների և առաջին խմբի զինհաշմանդամների՝

Երևան քաղաքում հաշվառված գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող բնակելի նշանակության շինությունների մասով:

3. Երևանի քաղաքապետին՝

սույն որոշման պահանջների կատարումն ապահովելու նպատակով ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ սույն որոշման 2-րդ կետում նշված հարկատուների գրանցման և գույքի գտնվելու հասցեների վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը՝ մինչև 2010 թվականի դեկտեմբերի 1-ը, օրենսդրությամբ սահմանված կարգով ճշտելու, ձեռք բերելու և անհրաժեշտ ձևակերպումներ կատարելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 65-րդ տարեդարձի, ինչպես նաև Շուշիի ազատագրման և խաղաղության օրվա առթիվ, առաջարկում եմ Հայրենական մեծ պատերազմի վետերաններին, Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքներին և առաջին խմբի զինհաշմանդամներին տրամադրել գույքահարկի գծով արտոնություն՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող բնակելի նշանակության շինության նկատմամբ:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույքահարկի գծով արտոնություն տրամադրելու մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**